ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

«Ժառանգություն և կրթություն. ցկյանս ուսումնառություն»

Սեպտեմբերի 26-27, 2020

Եվրոպական ժառանգության օրերի հարգելի՛ մասնակից

Սիրով հրավիրում ենք մասնակցելու սեպտեմբերի 26-27-ին Հայաստանում և Արցախում անցկացվող «Ժառանգություն և կրթություն. ցկյանս ուսումնառություն» խորագրով Եվրոպական ժառանգության օրերի ծրագրին:

Սա հիանալի առիթ է բազմաբնույթ միջոցառումների միջոցով մեկ անգամ ևս ծանոթանալու հազարամյակների պատմություն ունեցող մեր մշակութային ժառանգությանը:

Եվրոպական ժառանգության օրերն անցկացվում են յուրաքանչյուր տարի՝ Եվրոպական մշակութային կոնվենցիային (1954 թ.) միացած եվրոպական 50 երկրում: Ծրագիրը մեկնարել է 1984 թ. Ֆրանսիայում՝ «Պատմական հուշարձանների բաց դռների օր» խորագրով:

Այս տարի ևս Հայաստանի և Արցախի Հանրապետություններում կազմակերպվելու են օրվա խորհրդին համահունչ բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, համերգներ, դասախոսություններ, թանգարանային առցանց շրջայցեր, բազմաբնույթ կրթական ծրագրեր, որոնք մեկ անգամ ևս ապացուցելու են մշակութային ժառանգության և ցկյանս ուսումնառության անքակտելի կապը: Այս տարի, պայմանավորված նոր տեսակի կորոնավիրուսի համաճարակով, միջոցառումները անցկացվելու են առավելապես առցանց՝ հնարավորինս չվտանգելով մասնակիցների առողջությունը: Մշակութային օջախներում և կենդանի միջոցառումների ժամանակ խստագույնս կպահպանվեն հակահամաճարակային բոլոր կանոնները:

Յուրաքանչյուրիս ակտիվ մասնակցությունը կնպաստի Եվրոպական ժառանգության օրերի կայացմանը և ծրագրի նպատակների իրականացմանը: Կոչ եմ անում բոլորիս կենդանի կամ առցանց ներկայությամբ ու մասնակցությամբ մեկ անգամ ևս արժևորել մեր մշակութային ժառանգությունը և ներդրում ունենալ այն պահպանելու և դարերի հավերժությանը փոխանցելու նվիրյալ գործում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

	Հայաստանի պատմության թանգարան https://historymuseum.am/ *(ք. Երևան, Հանրապետության հրապարակ 4, հեռ. ՝+37411586127)*
Սեպտեմբերի 26	
10:30-12:30	Հեռավոր մարզերի երեխաների համար առցանց շրջայց՝ թանգարանի հիմնական հավաքածուի մասին
13:00-14:00	«Հայկական պղնձագործության գոհար Ջուղայի մատուցարանը» խորագրով բանախոսություն
Սեպտեմբերի 27	
12:00-16:00	«Արձագանքներ անցյալից» խորագիրը կրող առցանց ծրագիր, որի շրջանակում տարբեր մասնագիտությամբ մարդիկ կներկայացնեն թանգարանի հավաքածուից որևէ հատված՝ այն կապելով իրենց մասնագիտությանը
	Հայաստանի ազգային պատկերասրահ www.gallery.am *(ք. Երևան, Արամի 1, հեռ. ՝+37410580812)*
Սեպտեմբերի 26	
15:00	«Առցանց շրջայց եվրոպական թանգարաններով» ծրագրի նպատակն է 14-17 տարեկան պատանիների շրջանում բարձրացնել իրազեկվածությունը եվրոպական խոշոր թանգարանների մշակութային ժառանգության, և դրա մաս կազմող հայ ժողովրդի մշակութային ժառանգության վերաբերյալ: Ծրագրի ընթացքում վիրտուալ շրջայց կկատարենք եվրոպական խոշոր թանգարաններում, կծանոթանանք ցուցանմուշներին և դրանց պատմությանը, կներկայացնենք այդ թանգարաններում ցուցադրվող կամ թանգարանի հավաքածուի մաս կազմող հայկական մշակութային ժառանգությունը: *(առցանց կրթական ծրագիր)*
Սեպտեմբերի 27	
15:00	«Հայաստանի ազգային պատկերասրահի եվրոպական հավաքածուն». ծրագրի նպատակն է արտերկրում բնակվող մեր հայրենակիցներին հաղորդակից դարձնել արվեստին և նրանց համար բացահայտել ռատկերասրահի եվրոպական հավաքածուն: *(առցանց կրթական ծրագիր)*
	Գաֆեսճեան արվեստի կենտրոն *(ք. Երևան Թամանյան 10, հեռ. ՝+37410541932/34)*
	**Բոլոր կրթական ծրագրերի մուտքն անվճար է՝ նախնական գրանցմամբ*
Սեպտեմբերի 26	

12:00-14:00	«Դիմակ կրելու արվեստը» առցանց կրթական ծրագիր Մասնակիցները կծանոթանան դիմակի պատմությանը, տարբեր մշակույթներում դրա կիրառման ձևերին ու նշանակությանը: Կներկայացվեն տարբեր ժամանակների ծիսական, թատերական, կառնավալային ու այլ տեսակների դիմակներ, ինչպես նաև հայտնի արվեստագետների ստեղծագործություններ, որտեղ դիմակը կարևոր նշանակություն ունի: Ծրագրի վերջին՝ ստեղծագործական մասում մասնակիցները տանը եղած նյութերով կստեղծեն իրենց պաշտպանիչ դիմակները: *(ZOOM հարթակ)*
17:00	«Տարագիրներ և երազողներ» ցուցադրության գիրք-կատալոգի շնորհանդես, հարց ու պատասխան. ուղիղ եթեր (կվարեն ԳԱԿ ցուցադրությունների գծով տնօրեն Արմեն Եսայանցը և արվեստաբան, համադրող և կոլեկցիոներ Վիգեն Գալստյանը) *(https://www.facebook.com/cafesjiancentercascade/)*
Սեպտեմբերի 26, 27	
	Նախկին ԳԱԿ ցուցադրությունների վիրտուալ ներկայացում *(https://www.facebook.com/cafesjiancentercascade/)*
Սեպտեմբերի 27	
	«Թեյի տաղավար» տեսանյութի պրեմիերա, հեղինակ՝ Ջոանա Վասկենսելոս, ներկայացնում են ԳԱԿ աշխատակիցները *(https://www.facebook.com/cafesjiancentercascade/)*
	«Սասունցի Դավթի ճանապարհով» կրթական ծրագրի վերայց. «Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» նախաձեռնությանը ներկայացված՝ ԳԱԿ-ի պատմությունը և ծրագրի մասնակիցների կողմից ստեղծված կոմիքսային գրքերի հրապարակում *(https://www.facebook.com/cafesjiancentercascade/)*
	Կոմիտասի թանգարան-ինստիտուտ *(ք. Երևան, Արշակունյաց 28, հեռ.՝+37411570571)*
Սեպտեմբերի 26	
16:00	«Ռոմանսը Եվրոպայից մինչև հայ իրականություն» *(https://www.facebook.com/KomitasStateMuseumInstitute)*
	Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան www.gatmuseum.am *(ք. Երևան, Արամի 1, հեռ.՝+37410563641)*
Սեպտեմբերի 26	
11:30	Առցանց ցուցադրություն՝ նվիրված կաթողիկոս, հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային գործիչ, մտավորական ու գրող Մկրտիչ Խրիմյանին (Խրիմյան Հայրիկ) *(ֆեյսբուքյան էջ՝Գրականության և արվեստի թանգարան, ինստագրամյան*

	էջ՝gatmuseum)
20:00	Առցանաց ներկայացում՝ նվիրված Կոմիտասի ծննդյան օրվան *(ֆեյսբուքան էջ՝Գրականության և արվեստի թանգարան, ինստագրամյան էջ՝ gatmuseum)*
Սեպտեմբերի 27	
11:30	Առցանց ցուցադրությունն՝ նվիրված գրող, պատմաբան, բանաստեղծ, աշխարհագետ, բանահավաք, թարգմանիչ Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին *(կայքէջ՝www.gatmuseum.am, ֆեյսբուքան էջ՝Գրականության և արվեստի թանգարան, ինստագրամյան էջ՝gatmuseum)*
Սեպտեմբերի 27 և 31	
20:00	«Տերյանական շաբաթ» առցանց ֆիլմաշար՝ նվիրված բանաստեղծ Վահան Տերյանի 135-ամյա հոբելյանին *(ֆեյսբուքան էջ՝Գրականության և արվեստի թանգարան, ինստագրամյան էջ՝ gatmuseum)*
	Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան *(Նալբանդյան4/1, հեռ.՝+37410589610)*
Սեպտեմբերի 26	
	• Ազգային երգի օր. հանդիպում երաժիշտների հետ • Պոեզիայի օր • Փաստավավերագրական ֆիլմի ցուցադրություն՝ նվիրված եվրոպական հայտնի թանգարաններին *(գրադարանի ֆեյսբուքյան էջ)*
	Սերգեյ Փարաջանովի թանգարան *(Զորագյուղ ազգագրական թաղամաս 15/16, հեռ.՝+37410538473)*
Սեպտեմբերի 26	
11:30	«Եվրոպական ժառանգությունը Փարաջանովի արվեստում». կներկայացվեն արվեստի այն ստեղծագործությունները, որտեղ Փարաջանովն օգտագործել է եվրոպացի նկարիչների, մասնավորապես՝ Վերածննդյան ժամանակաշրջանի, նկարների կրկնօրինակները: Ստեղծագործությունները կուղեկցվեն նաև մեկնաբանություններով: *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
11:30	Տեսանյութ՝ «Ս. Փարաջանովը Վենետիկում» *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարան *ք. Երևան, Աբովյան 29, բն. 4, հեռ.՝+37410527774*
Սեպտեմբերի 26	
14:00	Եվրոպան և եվրոպական մասունքները Դերենիկ Դեմիրճյանի կյանքում Մաս 1. կներկայացվեն տեսագրություններ, որոնք պատմում են

	Դերենիկ Դեմիրճյանի՝ Ժնևում ապրած տարիների, դրանց առնչվող ցուցանմուշների մասին *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 26	
14:00	Եվրոպան և Եվրոպական մասունքները Դերենիկ Դեմիրճյանի կյանքում Մաս 2. սլայդ-շոուի միջոցով կցուցադրվեն գրողի ժնևյան կյանքին առնչվող բացիկներ, որոնք պահպանվում են տուն-թանգարանի ֆոնդում *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան www.erebuni.am *(ք. Երևան, Էրեբունի 38, հեռ.՝+37410432661)*
Սեպտեմբերի 26	
09:00	Գիտահանրամատրելի հաղորդում՝ «Շենգավիթը որպես համաշխարհային նշանակության հուշարձան». Կուր-արաքսյան ժամանակաշրջանի հայտնի մասնագետները գիտահանրամատչելի կերպով ներկայացնում են Շենգավիթ հնավայրի դերն ու նշանակությունը համաշխարհային ժառանգության համատեքստում *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw և թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
12:00	«Արքաներն Արարատի երկրի. Ռուսա-ՈՒեդիպրի» գիտահանրամատչելի կերպով կներկայացվի հետաքրքիր տեղեկություն Վանի թագավորության գահակալ Ռուսա Առաջինի վերաբերյալ: Հաղորդումը կուղեկցվի նաև թեմային համապատասխան պատկերներով: *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
17:00	«Պատանի հնագետի դպրոց» առցանց հաղորդում «Էրեբունի» ՊՀԱԹ-ի կարևոր գիտակրթական ծրագրերից մեկի մասին՝ «Էրեբունի» ՊՀԱԹ-ի տնօրեն Միքայել Բաղալյանի ներկայացմամբ *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw և թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
20:00	«Գուշակիր ուրարտական թվերը». մասնակիցներին ներկայացվում են ուրարտական թվանշանների ցանկը, իսկ զուգահեռ սյունակում գրված են ուրարտական թվերով կազմված հինգ թվեր: Մասնակիցները պետք է կռահեն՝ որ թվերն են ներկայացված սեպագրով և դրանց համապատասխան թվանշանային տարբերակները գրեն մեկնաբանություններում *(թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջեր)*
23:00	«Թեյշեբա աստծո արձանիկի առեղծվածը». գիտահանրամատչելի առցանց հաղորդում, որտեղ «Էրեբունի»

	ՊՀԱԹ-ի «Կարմիր բլուր» մասնաճյուղի ղեկավար, ուրարտագետ Վահե Սարգսյանի կողմից հանգամանալից կերպով կներկայացվի Կարմիր բլուր հնավայրից հայտնաբերված Թեյշեբա աստծո բրոնզե արձանիկը, նրա դերն ու նշանակությունը և հայտնաբերման հետ կապված առեղծվածային զուգադիպությունը *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw, թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջ)*
Սեպտեմբերի 27	
11:00	Հեծանվորդների, սիրողական հեծանվորդների և սպորտային տուրիզմի ֆեդերացիայի հետ համատեղ հեծանվային տուր Հանրապետության հրապարակից դեպի Երևանի հնագույն բնակավայրերից Շենգավիթ, այնուհետև՝ Կարմիր բլուր հնավայր, իսկ վերջում՝ Էրեբունի ամրոց և թանգարան, որտեղ բոլոր մասնակիցների համար անցկացվելու են ճանաչողական-տեղեկատվական էքսկուրսիաներ
09:30	«Էրեբունին և Արա անունով հրաշագործ վարպետը». հաղորդում հայ ականավոր քանդակագործ Արա Հարությունյանի և նրա կողմից կերտված Էրեբունի թանգարանի շենքի հարթաքանդակների մասին *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw, թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջ)*
14:30	«Միասին սովորենք ուրարտերեն. Բիայնիլի-ՈՒրարտուի սեպագիր արձանագրություններում վկայված բառերը». գրաֆիկական դիզայնի հետ մեկտեղված հաճելի մատուցմամբ կներկայացվի մեկ կարևոր բառ՝ վկայված Վանի թագավորության սեպագիր տեքստերում: Ընդորում՝ կներկայացվեցի ինչպես սեպագրով, այնպես էլ դրա հայերեն և անգլերեն տարընթերցմամբ *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw, թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջ)*
17:00	«Դպրությունն ՈՒրարտուում» առցանց գիտահանրամատչելի դասախոսություն, որտեղ «Էրեբունի» ՊՀԱԹ-ի տնօրեն Միքայել Բաղալյանի կողմից մանրամասն կներկայացվի Վանի, Արարտյան թագավորության դպրությանն առնչվող՝ մեզ հայտնի տեղեկությունները *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw, թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջ)*
20:00	«Վերականգնելով հնագույն գանձերը». առցանց գիտակրթական դասախոսություն, որի ընթացքում «Էրեբունի» ՊՀԱԹ-ի «Գիտահետազոտական, վերականգնման և ամրակայման» բաժնի ղեկավար Մանվել Ղալաչյանը կներկայացնի վերջին

	ամիսներին Էրեբունի թանգարանի լաբորատորիայում վերականգնված հնագիտական առարկաները, ինչպես նաև որոշակի գիտահանրամատչելի տեղեկություններ կներկայացնի հնագույն մետաղե առարկաների վերականգման առանձնահատկությունների մասին *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw, թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջ)*
21:00	«Էրեբունուց հայտնաբերված Օգոստոս կայսեր դրամը». գիտահանրամատչելի հաղորդում, որը կներկայցնի Էրեբունու պեղումներից հայտնաբերված Հռոմեական կայսր Օգոստոս-Օկտավիանոսի արծաթե դրամը և դրա նշանակությունը *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw, թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջ)*
23:00	Կներկայացվի հայտնի ուրարտական Քեֆ ամրոցի տարբեր կառույցների եռաչափ վերակազմության 360 աստիճան տարբերակը՝ արված «Էրեբունի» պատահնագիտական արգելոց-թանգարանի ճարտարապետ-վերականգնող Ռուբեն Սարգսյանի կողմից: Յուրաքանչյուրը շարժելով իր հեռախոսի էկրանը կամ համակարգչի ստեղնաշարը, հնարավորություն կունենա շրջագայել ուրարտական ամրոցում *(https://www.youtube.com/channel/UCy7j_qOE7dpPlXzlgwVJ3Tw, թանգարանի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջ)*
	Երևան քաղաքի պատմության թանգարան www.yhm.am *(ք.Երևան, Արգիշտիի 1/1, հեռ.՝+37410568185)*
Սեպտեմբերի 26	
12:00	«Երևանի պատմությունը. ներկայացնում են սերունդները». միջոցառման շրջանակում տարբեր սերունդների ներկայացուցիչներ խոսքն իրար փոխանցելով կներկայացնեն քաղաքի պատմության տարբեր դրվագներ. ավարտին՝ թանգարանի գիտաշխատողը կներկայացնի Երևանի պատմության վերաբերյալ հրատարակված վերջին աշխատությունը *(https://www.facebook.com/yhm1931/)*
	Արամ Խաչատրյանի տուն-թանգարան http://akhachaturianmuseum.am/ *(ք. Երևան, Զարոբյան 3, հեռ.՝+37410522691)*
Սեպտեմբերի 26	
14:00	«**Նկարենք երաժշտություն**» կրթական ծրագրի առցանց մրցույթ. առաջարկվում է LIVE միացման ընթացքում ունկնդրել Ա. Խաչատրյանի **«Գայանե»** բալետը և նկարել, այնուհետև նկարը ուղարկել տուն-թանգարանի Aram Khachaturyan Museum

	https://www.facebook.com/museum78/ էջին: Մասնակցությունը՝ առանց տարիքային սահմանափակման:
19:00	**«Խաչատրյանը՝ մանկավարժ»** ֆիլմի առցանց ցուցադրում: Ֆիլմը կոմպոզիտորի մանկավարժական գործունեության վերջին տարիների մասին է: *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
14:00	«**Նկարենք երաժշտություն**» կրթական ծրագրի առցանց մրցույթ. առաջարկվում է LIVE միացման ընթացքում ունկնդրել Ա. Խաչատրյանի **«Սպարտակ»** բալետը և նկարել, այնուհետև նկարը ուղարկել տուն-թանգարանի Aram Khachaturyan Museum https://www.facebook.com/museum78/ էջին: Մասնակցությունը՝ առանց տարիքային սահմանափակման
19:00	**«Մենամարտ» հաղորդման շարքից**. հաղորդում՝ նվիրված Արամ Խաչատրյանի մանկավարժական գործունեությանը: Առցանց մասնակցում են կոմպոզիտորի ուսանողները *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Հովհաննես Թումանյանի թանգարան *(ք. Երևան, Մոսկովյան 40)*
Սեպտեմբերի 26	
19:00	«Յոթը սարի ետևում» հայրենաճանաչողական-գիտակրթական մրցույթ-փառատոնի ամփոփում և մրցանակաբաշխություն (բացօթյա և հեռարձակում թանգարանի առցանց հարթակներում) *(թանգարանի ամառային այգի)*
19:00	«Կոմիտասի օպերային նախագծերը. Անուշ» համերգ-դասախոսություն «Գեղարդ» երգեցիկ խումբ – խմբավար՝ Ա. Պապայան, բանախոս՝ «Գեղարդ» երգեցիկ խմբի գեղարվեստական ղեկավար, արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր Մ. Նավոյան (բացօթյա և հեռարձակում թանգարանի առցանց հարթակներում) *(թանգարանի ամառային այգի)*
	Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան http://www.spendiaryanmuseum.am *(ք. Երևան, Նալբանդյան 21, հեռ.՝+37410521299)*
Սեպտեմբերի 26	
13:00	«Հանդիպում կոմպոզիտորի պատշգամբում». Երաժշտական երկխոսություն՝ թավջութակահար, ՀՀ վաստակավոր արտիստ, Չայկովսկու անվ. XIV-րդ և բազմաթիվ

	միջազգային մրցույթների հաղթող, «Մովսես Խորենացի» մեդալակիր Նարեկ Հախնազարյանը համաշխարհային ճանաչման իր փորձով կիսվում է 6 պատանի երաժիշտ-կատարողների հետ: *(https://www.facebook.com/housemuseum/)*
Սեպտեմբերի 27	
15:00	«Մեր մանկության խաղերը. երկու սերունդ». ծնողները – երեխաներին կներկայացնեն իրենց մանկության խաղերը և միասին կխաղան թանգարանի պուրակում
Սեպտեմբերի 26-27	
17:00	«Սպենդիարյանական մասունքները՝ ժեստերի լեզվով. հասանելի թանգարան՝ բոլորի համար». ներառական ծրագիր, որի շրջանակում լսողական խնդիր ունեցող պատանիները ժեստերի լեզվով կներեկայացնեն թանգարանային ցուցանմուշները *(https://www.facebook.com/housemuseum/)*
	Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան www.isahakyanmuseum.am *(ք. Երևան, Զարոբյան 20, հեռ.՝+37410562424)*
Սեպտեմբերի 26	
11:00	«Ծաղիկներդ հազար անուն, հազար գույն» հայկական լեռնաշխարհի բույսերին և ծաղիկներին նվիրված տեսանյութ *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
16:00	«Ի՞նչ են պատմում հուշարձանները» ծրագրի շրջանակներում՝ Երերույքի տաճարի մասին պատմող տեսաֆիլմ: Պատմում և ներկայացնում է Գյումրիի թիվ 1 դպրոցի աշակերտուհին: *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
11:00	Դարբնագործությունը հայոց մեջ». տեսանյութ. ներկայացվում է ավանդական արհեստագործության ճյուղերից մեկը՝ դարբնագործությունը: Անդրադարձ է կատարվում նաև գյումրեցիների արհեստավորական կենցաղին: *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 26-27	
13:00	Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի թեմաներով մայրաքաղաքի և մարզերի հանրակրթական դպրոցների և նկարչական քոլեջների երեխաների հաղթած աշխատանքների առցանց ցուցահանդես *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*

	Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան *(ք. Երևան, Սարյան փ. 3, հեռ.՝+37410580568)*
Սեպտեմբերի 26	
13:00-15:00	Մեր տատիկների մանկության սիրած խաղերը դպրոցական և տների բակերում՝ պարան, կլաս *(տուն-թանգարանին հարող բացօթյա տարածքում)*
16:00-17:30	Թանգարանի խոհանոցում առցանց պատրաստում ենք թխվածք Մ. Սարյանի տիկնոջ՝ Լուսիկ Սարյանի գրքույքի բաղադրատոմսով *(տուն-թանգարանի խոհանոց)*
Սեպտեմբերի 27	
13:00-14:00	Ծանոթություն Մ. Սարյանի տուն-թանգարանի հարևանությամբ գտնվող Սուրբ Զորավոր եկեղեցու և նրա պատմության հետ
16:00-17:30	Մ. Սարյանի տուն-թանգարանի 1-ին և 4-րդ ցուցասրահներում բացված Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի սարյանական ձևավորումների ցուցահանդեսի առցանց էքսկուրսիա
	Երվանդ Քոչարի թանգարան *(ք. Երևան, Մաշտոցի 39/12, հեռ.՝+37410259326)*
Սեպտեմբերի 26	
22:00-22:30	«Հայ դյուցազնավեպի քոչարյան պատումը» տեսաֆիլմի ցուցադրություն՝ ուղիղ միացմամբ Ֆիլմը նվիրված է «Սասունցի Դավիթ» էպոսի քոչարյան բացառիկ նկարազարդումների գրաֆիկական շարքին, դրանց ստեղծման պատմությանը, առանձնահատկություններին: Ֆիլմում ներկայացվում են նաև էպոսի այն հատվածները, որոնք ոգեշնչել են Մաէստրո Քոչարին ստեղծելու գրաֆիկական շարքի յուրաքանչյուր էջը: *(թանգարանի ֆեյսբուքյան էջ, ֆիլմը կցուցադրվի նաև թանգարանում, ժամը՝ 12:00-16:00)*
Սեպտեմբերի 27	
22:00-22:30	«Կիբեռնետիկայի մուսան» տեսաֆիլմի ցուցադրություն՝ ուղիղ միացմամբ. ֆիլմը ներկայացնում է Երվանդ Քոչարի՝ մարդկային արարչագործությանը նվիրված «Կիբեռնետիկայի մուսա» քանդակը *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
20:00	«Քոչարյան ստեղծագործությունները Բախի երաժշտության ներքո» տեսահոլովակի պրեմիերա. կատարում է Հայաստանի պետական նվագախմբի երիտասարդական անսամբլ ՕՏՐԻ ՏՐԻՈՆ *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու) *(ք. Երևան, Իսահակյան 38, հեռ.՝+37410560872)*

Սեպտեմբերի 26	
13:00	**«Մեկ գլուխգործոցի վիրտուալ աշխարհում».** ծրագիրը նախատեսում է Բ. Գրիգորևի «Կենդանաբանական այգի» նկարի ներկայացումը VR տեխնոլոգիայի միջոցով: Դիտողները վիրտուալ իրականության ակնոցների միջոցով կհայտնվեն ստեղծագործության «ներսում» (նկարի հիման վրա նախապես ստեղծված 3D միջավայրում), կզբոսնեն այնտեղ, կհանդիպեն նկարի հերոսներին և կծանոթանան ստեղծագործության պատմությանը
	Եղիշե Չարենցի տուն-թանգարան *(ք. Երևան, Մաշտոցի 17, հեռ.՝+37410531412)*
Սեպտեմբերի 26	
14:00	Շրջայց Ե. Չարենցի տուն-թանգարանում (անգլերեն)
Սեպտեմբերի 27	
14:00	Առցանց էքսկուրսիա «Ե. Չարենցի տուն-թանգարանը որպես պատմամշակութային հուշարձան»՝ Չարենցի թոռնուհու ուղեկցությամբ *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան www.folkartcenter.am *(ք. Երևան, Աբովյան 64, հեռ.՝+37410569380)*
Սեպտեմբերի 24	
14:00	«Ազգայինը և հոգևորը Հիերոնիմուս Բոսխի արվեստում» դասախոսություն: Հանդիպման ընթացքում կբացահայտվեն 15 դ. նիդերլանդացի նկարիչ Հիերոնիմուս Բոսխի արվեստի ակունքները, նրա աշխարհայացքը, գեղարվեստական արտահայտչամիջոցների առանձնահատկությունը
Սեպտեմբերի 26	
15:00	Համերգային ծրագիր Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի ավանդական երգի-պարի ուսուցման դասընթացի սաների մասնակցությամբ *(Եղվարդի սբ Աստվածածին եկեղեցու հարակից բակ)*
Սեպտեմբերի 27	
15:00	Համերգային ծրագիր Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի ավանդական երգի-պարի ուսուցման դասընթացի սաների մասնակցությամբ *(Արարատի մարզի Ջրահովիտ համայնք)*
	Մալաթիա-Սեբաստիա վ/շ «Գրադարանային համակարգ» ՀՈԱԿ *(ք. Երևան,ՀԱԹ, Ա1, Շերամի 75, հեռ.՝+37410723470)*

Սեպտեմբերի 27	
16:00	«Հեքիաթը՝ որպես կարևոր ժառանգություն կրթության մեջ» 1. Եվրոպական տարբեր երկրների ժողովրդական և այլ հեքիաթների խաղարկային ընթերցում ամեն տարիքի ընթերցողների համար 2.Ակնարկ ընթերցվող հեքիաթների հեղինակների մասին 3. Զրույց՝ «Հեքիաթի դերը մարդու կրթության, դաստիարակության և զարգացման մեջ *(ՀՈԱԿ-ի ֆեյսբուքյան էջ)*
	Աջափնյակ վ/շ «Գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ *(ք. Երևան,Մարգարյան 11, հեռ.՝+37491262323)*
Սեպտեմբերի 26	
	«Ստեղծիր քո գիրքը» միջոցառման շրջանակում թվային տեխնոլոգիաների ներգրավվամբ կստեղծվի էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակ *(ՀՈԱԿ-ի ֆեյսբուքյան էջ)*
	Էրեբունի վարչական շրջանի N 25 գրադարան *(Վարդաշեն 3-րդ փողոց, 2-րդ շենք, հեռ.՝+37477077239)*
Սեպտեմբերի 26	
18:00	«Հայ-իսպանական պատմամշակութային կապեր» թեմայով դասախոսություն
	Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան *(ք. Երևան, Քանաքեռ 2/4, հեռ.՝+37410284686)*
Սեպտեմբերի 26-27	
14:00	ԼԻԲԵՐ ԱՐՄԵՆԻԵՐ. ծրագրի նպատակն է ներկայացնել Խ. Աբովյանի առնչությունները եվրոպական մշակույթի, գրականության, գիտական մտքի և միջավայրի հետ: Միջոցառման ծրագրում՝ 1. Ընթերցումներ. ● Հետաքրքրաշարժ դրվագներ դորպատյան կյանքից և ուսումնառությունից ● Խ. Աբովյանի թարգմանությունները եվրոպացի հեղինակներից ● Խ. Աբովյանի գիտական ճանապարհորդությունները եվրոպացի գիտնականների հետ և դրանց ազդեցությունը ● Արարատյան առաջին վերելքը եվրոպացիների հետ: 2. Լուսանկարների ցուցադրություն՝ նվիրված Արարատյան վերելքի 191-ամյակին: 3. Երաժշտական կատարումներ *(տուն-թանգարանի բացօթյա միջոցառումների հարթակ)*

	Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան *(ք. Երևան, Նոր Նորքի 1-ին միկրոշրջան, Նանսենի 4/4)*
Սեպտեմբերի 28	
14:00	Մարիտ Ֆոսսե «Ֆրիտյոֆ նանսեն՝ մեծ մարդասերը» 2020 թ. հրատարակված գրքի քննարկում (հեղինակը ՄԱԿ-ի աշխատակից է, գիրքը թարգմանել և հրատարակել է թանգարանը)
	Ժամանակակից արվեստի թանգարան *(ք. Երևան, Մաշտոցի 7, հեռ.՝ +37410539637)*
Սեպտեմբերի 26-27	
16:00	"The Bunker Art Group" առցանց նախագիծ՝ նվիրված խմբի 30-ամյակին: The Bunker Art Group-ը նախկին Խորհրդային Միության այլախոհ արվեստագետների թիմ է: Խումբը միջազգային է և նախագիծը կներկայացնի արվեստագետների մի քանի սերնդի գործունեություն:
	Միլվա Կապուտիկյանի տուն-թանգարան *(ք. Երևան, Մ. Բաղրամյան 1-ին անցուղի, շենք 1/26, հեռ.՝ +37410520930)*
Սեպտեմբերի 26	
12:00-13:00	Պոեզիայի ավանդական օր Միլվա Կապուտիկյանի շիրիմի մոտ. ծաղկադրումից և խնկարկումից հետո ելույթ կունենան, դպրոցականներ, ուսանողներ, դերասաններ և բանաստեղծուհու արվեստի այլ երկրպագուներ *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
11:00	Միլվա Կապուտիկյանի գրական ժառանգության ուսումնասիրության դրվածքը ՀՀ բուհերում. հարցազրույց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գրականագետ, Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դասախոս Աելիտա Դոլուխանյանի, նոր գրականության ամբիոնի այլ դասախոսների և ուսանողների հետ *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն *(Երևան, Թաիրովի 15, հեռ.՝ +37410587425)*
Սեպտեմբերի 27	
	«Գլաձորի համալսարան 736» առցանց՝ ա. ֆիլմի դիտում բ. դասախոսություն
	Հայաստանի ազգային գրադարան http://nla.am *(ք. Երևան, Տերյան 72, հեռ.՝ +37460623513)*

Սեպտեմբերի 26	
12:00	«Գիր հավերժության. Ուրբաթագրքից մինչև մեր օրեր» առցանց ցուցադրություն, որտեղ կարտացոլվի հայ գրքի անցած ուղին *(ՀԱԳ ֆեյսբուքյան էջ)*
14:00	Առցանց շրջայց ՀԱԳ գրատպության թանգարանում *(ՀԱԳ ֆեյսբուքյան էջ)*
17:00	Հայ պարբերական մամուլի դերը ազգային լուսավորության զարգացման գործում *(ՀԱԳ ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
12:00	Ղևոնդ Ալիշան – 200, գրականության առցանց ցուցադրություն, դասախոսություն *(ՀԱԳ ֆեյսբուքյան էջ)*
14:00	Համալսարանական հրատարակություններ. գրականության առցանց ցուցադրություն՝ նվիրված մի քանի համալսարանի հիմնադրման հոբելյաններին։ *(ՀԱԳ ֆեյսբուքյան էջ)*
17:00	Մանուկ Աբեղյան – 200. գրականության առցանց ցուցադ-ություն *(ՀԱԳ ֆեյսբուքյան էջ)*
	Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան http://natchildlib.org/hy *(ք. Երևան, Տերյան 42/1, հեռ.՝+37410521222)*
Սեպտեմբերի 26	
	• Տիկնիկային ներկայացում՝ ֆրանս. ժող. հեքիաթ՝ «Հեքիաթ աքլորի մասին» տեսանյութ • Ռայներ Մարիա Ռիլկե – 145. գերմաներեն և հայերեն տեսանյութ (բարձր տարիքի ընթերցողներին հայերեն և գերմաներեն կներկայացվեն գրողի կենսագրությունը և ստեղծագործությունները) • Խաղ-վիկտորինա. եվրոպական գրողների ստեղծագործություններ (կրտսեր և միջին տարիքի ընթերցողներին կառաջարկվեն հարցեր եվրոպական գրողների ստեղծագործությունների շուրջ, որոնց պատասխաններն ընթերցողները կգրեն մեկնաբանություններում) • Գրքի քննարկում՝ Օսկար Ուայլդ «Աստղամանուկ» (միջին տարիքի ընթերցողներին կառաջարկվի էլեկտրոնային հղումով կարդալ հեքիաթը, իսկ ցանկացողները հետո zoom ծրագրով կմասնակցեն քննարկմանը) • «Եվրոպայի պատմության և մշակույթի էջերից» հոլովակ

	(միջին և բարձր տարիքի երեխաներին կներկայացվեն Եվրոպայի պատմության, մշակույթի մասին հետաքրքիր դրվագներ և մշակութային ժառանգության նմուշներ)
Սեպտեմբերի 27	
	• Ֆեդերիկո Ֆելինի 100. հոլովակ (բարձր տարիքի ընթերցողները կծանոթանան կինոռեժիսորի կյանքին, ֆիլմերին, կտրվի ֆիլմի առցանց դիտման հղում) • Գրքի քննարկում՝ Ջաննի Ռոդարիի «Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում» հեքիաթը (Ջաննի Ռոդարի 100 ամյակին նվիրված կրտսեր տարիքի ընթերցողներին կառաջարկվի /grqaser.org/am/192/ հղումով աուդիո տարբերակով լսել հեքիաթը, կամ էլեկտրոնային հղումով կարդալ, արդյունքում՝ zoom ծրագրով ցանկացողները կմասնակցեն քննարկմանը) • Նիկկոլո Պագանինի՝ իտալացի ջութակահար, կոմպոզիտորի ստեղծ. ունկնդրումներ (երաժշտասեր ընթերցողներին կներկայացվեն երաժշտի կյանքից հետաքրքիր դրվագներ և առցանց հղումով ստեղծագործության ունկնդրում)
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
	Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան *(գյուղ Արաքս, Դանիել-բեկ Փիրումյան 1, հեռ.՝+37423769997)*
Սեպտեմբերի 26	
10:00-17:00	«Եվրոպական մշակութային առանձնահատկություններ». ժամանակավոր առցանց ցուցադրություն Ժամանակավոր ցուցահանդես *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
18:00-19:00	Ֆրանսիական երաժշտության ժամ *(«Մուսա լեռան հերոսամարտի պատմության և մուսալեռցիների ազգագրության թանգարան» մասնաճյուղի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
10:00-17:00	Եվրոպական պարերի հեռավար ուսուցում *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
18:00-18:45	Եվրոպական պարերի հեռավար ուսուցում *(«Մուսա լեռան հերոսամարտի պատմության և մուսալեռցիների ազգագրության թանգարան» մասնաճյուղի ֆեյսբուքյան էջ)*
	Մեծամոր համայնք
Սեպտեմբերի 26	

	«Եվրոպայի գույներ» ցուցահանդես. առցանց հեռարձակում *(Մշակույթի տուն՝ ք. Մեծամոր վարչական կենտրոն 2)*
Սեպտեմբերի 27	
	Ցուցահանդես գրադարանում. առցանց հեռարձակում *(Մեծամորի գրադարան՝ ք. Մեծամոր վարչական կենտրոն 2)*
	Արմավիր քաղաք
Սեպտեմբերի 25	
11:00	«Հեքիաթին հյուր». էջեր-եվրոպական հեքիաթներից՝ • Շառլ Պերո - Կարմիր գլխարկ (թիվ 8 մանկապարտեզ) • Շառլ Պերո – Մոխրոտիկ (թիվ 2 մանկապարտեզ) • Լուիս Քերոլ – Ալիսը հրաշքների աշխարհում (թիվ 1 մանկապարտեզ)
Սեպտեմբերի 26	
11:00	Դիմանկարի պատմությունը եվրոպական կերպարվեստում *(Արմավիրի քաղաքապետարանի արվեստի դպրոց, Արարատյան 3)*
12:00	Երաժշտական գործիքների կենսագրությունը *(Արմավիրի քաղաքապետարանի երաժշտական դպրոց, Հունան Ավետիսյան 2/2)*
	Էջմիածին քաղաք
Սեպտեմբերի 26	
12:00	«Ճանաչենք մեր քաղաքը. Վաղարշապատը և նրա բնակիչները 100 տարի առաջ» (կներկայացվեն 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի Վաղարշապատ քաղաքի և նրա բնակիչների կյանքի և կենցաղի մասին պատմող լուսանկարները, ինչպես նաև հայտնի վաղարշապատցիների անձնական իրերի ֆոտոշարքը) *(«Էջմիածնի Պատմաազգագրական թանգարան» ՀՈԱԿ, ք. Էջմիածին, Մյասնիկյան 110)*
12:00	Հովհաննես Հովհաննիսյանը՝ որպես բնիկ էջմիածնեցի (կներկայացվի Հ. Հովհաննիսյանի կյանքը, գործունեությունը, կցուցադրվեն ամբողջ թանգարանը, ինչպես նաև թանգարանի ֆոնդերից որոշ ցուցանմուշներ) *(Հ. Հովհաննիսյանի անվան տուն-թանգարան» ՀՈԱԿ, ք. Էջմիածին, Ս. Մովսես Խորենացի 2/41, առցանց)*
14:30	«Հայոց գիրը Եվրոպայում» (պատմական ակնարկ Եվրոպայի հայկական տպարանների գործունեության մասին, կներկայաց-վեն հրատարակված գրքերի առանձնահատկություններն ու դրանց ազդեցությունը մշակույթի զարգացման գործում) *(«Հ. Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ, ք. Էջմիածին, Ս. Մովսես Խորենացի 2)*
Սեպտեմբերի 27	

17:30	«Փարիզ. մի մայրաքաղաքի պատմություն» փաստավավերագրական ֆիլմի բացօթյա կինոդիտում *(Կոմիտասի անվան մշակույթի պալատին կից «Սբ. Մարիանե» այգի)*
	ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
	Պ. Սևակի տուն-թանգարան *(գ. Զանգակատուն, Պարույր Սևակի փողոց, 1-ին փակուղի, 1 տուն, հեռ.՝ +37493377599)*
Սեպտեմբերի 26-27	
	«Զանգակատուն համայնքի հուշարձանների ու տեսարժան վայրերի պատմությունը» լուսանկարների ցուցահանդես *(առցանց՝ թանգարանի ֆեյսբուքյան էջում)*
	Օհան Չուբարյանի անվան Արարատի մարզային գրադարան *(ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի 21, հեռ.՝+37423521944)*
Սեպտեմբերի 26	
12:00	Հայկական ազգային տարազ. ներկայացնում է բանաստեղծ, նկարիչ, հրապարակագիր, «Տարազ Էյ Էմ» բրենդի հիմնադիր Սվետլանա Հակոբյանը
18:00	«Գրերի գյուտից մինչև տպագրություն» զեկույց
Սեպտեմբերի 27	
13:00	Հայ հնատիպ գրքերի անցած ուղին Եվրոպայում
17:00	Եվրոպական գրողների ասույթներն ու բանաստեղծությունները Հայաստանի մասին
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
	Պերճ Պռոշյանի տուն-թանգարան *(ք. Աշտարակ, Պռոշյան 4, հեռ.՝+37423233254)*
Սեպտեմբերի 26	
12:00-15:00 *13:00*	• Թանգարանային առցանց էքսկուրսիա երեխաների կողմից • Դպրոցից դուրս՝ դպրոցին հավատարիմ. առցանց հանդիպում սկաուտական շարժման մասնակիցների հետ, ծանոթություն գործունեությանը, վարպետաց դաս «Արագածոտնի մարզը՝ ֆոտոտուրի կենտրոն». մարզի հետաքրքիր բնակավայրերը, շենքերն ու շինությունները կադրում
Սեպտեմբերի 27	
12:00-14:00 *10:00-18:00*	• Առցանց ասմունք տարբեր լեզուներով • «Արագածոտնի մարզը՝ ֆոտոտուրի կենտրոն». մարզի հետաքրքիր բնակավայրերը, շենքերն ու շինությունները կադրում (առցանց ակցիա) • Լուսանկարվենք ճիշտ՝ լուսանկարվելու և լուսանկարելու

13:00	տեխնիկայի տարրական կանոնները
	Վ. Պետրոսյանի անվան Արագածոտնի մարզային գրադարան *(ք. Աշտարակ, Միսակյան 2/10, հեռ.՝ +37423233243)* aragatsotn.reglib.am
Սեպտեմբերի 26	
11:00	«Ժառանգություն և կրթություն. ցկյանս ուսումնառություն» գրքային ցուցահանդես *(Գրադարան)*
Սեպտեմբերի 26-27	
14:00	«Պատմվածքի մեծ վարպետը»՝ Ալ. Կուպրին – 150, պատմվածք-ների ընթերցումներ *(Գրադարան)*
	Արագածոտնի մարզպետարան
Սեպտեմբերի 27	
16:00	Կիրառական արվեստի ցուցադրություն *(Արագածի արվեստի դպրոց, գ. Արագած, 8 փողոց, 4/1)*
	Ապարան քաղաք
Սեպտեմբերի 26	
16:00	Առցանց ցուցադրություն *(Ապարանի արվեստի դպրոց, Գ. Նժդեհ 12)*
16:00	Գրական ընթերցումներ *(Ապարան համայնքի գրադարան, ք. Ապարան, գ. Նժդեհի 4)*
Սեպտեմբերի 27	
16:00	Երաժշտական ընդմիջում *(Ապարանի արվեստի դպրոց, Գ. Նժդեհ 12)*
	Աշտարակ քաղաք
Սեպտեմբերի 26	
13:00	«Ազգային մտածողություն, ազգային երաժշտություն և նվագարան» առցանց համերգ: *(«Ա. Այվազյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, ք. Աշտարակ, Ն.Աշտարակեցու հրապարակ 10)*
14:30	«Աշտարակը եվրոպացու աչքերով» նկարների ցուցահանդես: *(«Գ.Ոսկանյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ, ք. Աշտարակ,Գր.Ղափանցյան 1)*
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
	Գեղարքունիքի երկրագիտական թանգարան *(ք. Գավառ, Զորավար Անդրանիկի 32, հեռ.՝ +37426422119)*
Սեպտեմբերի 26	

14:00 *15:00*	• «Վահան Արծրունու՝ գիտական մանկավարժի դերը համալսարանական գիտության և կրթության սկզբնավորման գործում» • Վահան Արծրունու արխիվային նյութերի ցուցադրության բացում *(թանգարանի շենք)*
Սեպտեմբերի 27	
14:00	Գավառի տարածաշրջանի վաստակաշատ բժիշկներն ու նրանց գործունեությունը» տարածաշրջանի վաստակաշատ բժիշկների լուսանկարների ցուցադրություն *(թանգարանի շենք)*
	ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն *(ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8, հեռ.՝+37426422843)*
Սեպտեմբերի 26	
14:00 *18:00*	• «Ինձ դուր է գալիս» Մարիա Ցվետաևա. ներկայացնում է դերասանուհի Սաթենիկ Թովմասյանը • «Վերելք»՝ Հովհաննես Շիրազ. ասմունքում է դերասան Հովհաննես Հասասյանը *(թատրոնի շենքում)*
Սեպտեմբերի 27	
17:00	«Կացին ախպեր» ժողովրդական հեքիաթ Հովհաննես Թումանյանի մշակմամբ. ներկայացնում է դերասան Մուշեղ Սիմոնյանը *(թատրոնի շենքում)*
	Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան *(ք. Գավառ, Զորավար Անդրանիկի 18, հեռ.՝+37493317404)*
Սեպտեմբերի 26	
13:00	Եվրոպական երկրների 26 ճանաչված գրողների գրավոր ժառանգության ներկայացում *(գրադարանի ֆեյսբուքյան էջ)*
15:00	«Մեր հրաշագեղ Հայրավանքը». եկեղեցու պատմության և ավանդության ներկայացում *(գրադարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
13:00	«Գորգագործություն՝ արհեստ և արվեստ». գորգագործության պատմության և տեսակներ ներկայացում, Գավառի մանկատան սաների աշխատանքների ցուցադրություն *(գրադարանի ֆեյսբուքյան էջ)*
15:00	«Խաչքարերի խորհրդավոր անտառը». Նորատուսի խաչքարերին նվիրված ֆիլմի ցուցադրություն, լեգենդի ներկայացում *(գրադարանի ֆեյսբուքյան էջ)*

	ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
	Դսեղի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան *(Լոռու մարզ, գյուղ Դսեղ, 1 փողոց, 10տ., հեռ.՝+37477906989)*
Սեպտեմբերի 26	
16:00	Մեծահասակների համար բանավեճ՝ «Թումանյանի հրապարակախոսությունը»: Մասնակիցներին կառաջադրվեն հարցեր կրթության մասին և կընթերցվեն Թումանյանի համապատասխան հրապարակախոսական հոդվածներից: *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան *(ք. Վանաձոր, Դեմիրճյան 23/1, հեռ.՝+37477465644)*
Սեպտեմբերի 26	
15:00	«Վանաձորի հնագիտական բնակատեղիները». միջոցառման շրջանակներում կներկայացվի Վանաձոր քաղաքի հնագիտական բնակատեղիների (Ժդանով, Քոսի-Ճոթեր, Մաշտոցի բլուր, Թագավորանիստ) համառոտ պատմությունը, հայտնաբերված նմուշները՝ մատնանշելով վերջիններիս առանձնահատկությունները ըստ ժամանակաշրջանի և տեղանքի *(թանգարան և թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Լոռու մարզային գրադարան *(ք. Վանաձոր, Վարդանանց 25, +37432245126)*
Սեպտեմբերի 26	
15:00	Ֆրանց Կաֆկա-Գուրգեն Խանջյան ստեղծագործական առնչություններ
17:00	Սոմերսեթ Մոեմի «Թատրոն» վեպի քննարկում
Սեպտեմբերի 27	
15:00	«Քարահունջ» փաստագրական ֆիլմի դիտում
17:00	Ռեդյարդ Քիփլինգի «Մաուգլի» վեպի քննարկում
	ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
	Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան *(ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 5,հեռ.՝+3742220220)*
Սեպտեմբերի 22-27	
	«Ժառանգություն և կրթություն.ցկյանս ուսումնառություն». շարքը կներկայացնի մարդկանց, ովքեր անկախ տարիքից զբաղվում են իրենց սիրած աշխատանքով *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 26-27	
	Ժառանգություն և կրթություն. ցկյանս ուսումնառություն» տեսաֆիլմ *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*

	Գառնիի մարզամշակութային կենտրոն *(Կոտայքի մարզ գ. Գառնի Շահումյան 6, հեռ.՝+37477939039)*
Սեպտեմբերի 26	
13:00	«Գառնիի մշակութային ու կրթական ավանդույթը» (անդրադարձ բնակավայրի պատմությանը, այցելություն գրադարան, վարպետաց դասեր՝ հայկական խոհանոց, կարպետագործություն, երգ, պար, թատրոն)
	Աբովյանի համայնքային գրադարան *(ք. Աբովյան, Տարտուի փողոց, հեռ.՝+37494794780)*
Սեպտեմբերի 27	
15:00	Աբովյանի համայնքային գրադարանի եվրոպական գրականության նմուշների ցուցադրություն Վերածննդյան դարաշրջանի հետքերով հայտնի ստեղծագործությունների ներկայացում, ուսումնասիրություններ *(գրադարանի ընթերցասրահ)*
	Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց *(ք. Բյուրեղավան, Վ. Սարգսյան 18/44, հեռ.՝+37493572370)*
Սեպտեմբերի 27	
14:00	Ֆրանսիա – Հայաստան՝ անխախտ բարեկամություն 1.պատմական ակնարկ 2.գեղարվեստական մաս՝ երգ, պար, նկարների և գրքերի թեմատիկ ցուցահանդես
	Աբովյան քաղաք
Սեպտեմբերի 26	
16:00	Երեխաները կծանոթանան Եվրոպական թանգարանների բոլոր ժամանակների գլուխգործոցներին *(Աբովյանի երեխաների աջակցության կենտրոնի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
16:00	Խեցեգործության օր, որտեղ երեխաները կներկայացնեն իրենց պատրաստած իրերը *(Աբովյանի գեղարվեստի դպրոց)*
15:00	Մշակույթը մեր կյանքում՝ 1.համառոտ տեղեկություն եվրոպական և ազգային մշակույթի մասին 2.երաժշտական ստեղծագործությունների կատարում *(Աբովյանի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոցի դահլիճ)*
	Չարենցավան համայնք
Սեպտեմբերի 26	
16:00	1. Լյուդվիգ վան Բեթհովեն-250 2. Դասարանական ցուցահանդես գեղարվեստի բաժնում

	(Չարենցավանի Գառզուի անվան արվեստի դպրոց)
Սեպտեմբերի 27	
17:00	Համերգային ծրագիր 1. Բախ, տոկատ և ֆուգա ռե մինոր (երգեհոն) 2. Ա. Խաչատրյան, «Լեզգինկա» 3. Խ. Ավետիսյան, «Ծաղկած բալենի» (քանոնահարների համույթ) *(Չարենցավանի Ա. Խաչատրյանի անվան ՄԵԴ)*
Սեպտեմբերի 26	
15:00	1. Ցուցահանդես (նկարչություն և ասեղնագործություն) 2. Համերգային ծրագիր . Մենդելսոն, «Երգ առանց խոսքի» դո մինոր . Ազգագրական պարերի շարան *(Արզականի արվեստի դպրոց)*
	Ակունք համայնք
Սեպտեմբերի 26	
14:00	Հայկական ազգային պարերի (քոչարի, յարխուշտա, գորանի և այլն) պատմության ներկայացում առցանց հարթակում և Կոտայք գյուղական համայնքի գեղատեսիլ բնավայրում պարային ներկայացման կազմակերպում երեխաների մասնակցությամբ (մինչև 10 երեխա)՝ պահպանելով համավարակային անվտանգության բոլոր կանոնները *(գ. Կոտայքի մշակույթի տուն)*
12:00	«Մարդկային բանականության երեք բանալին՝ թիվ, տառ, նոտա. գիտենալ, մտածել, երազել. ամեն բան դրա մեջ է» առցանց հարթակով գրքային ցուցահանդեսների կազմակերպում *(գ. Ակունքի մշակույթի տուն)*
	1. Գրական ընթերցումներ. 2. «Գրականությունը մերձեցնում է բոլոր ժողովուրդներին». եվրոպական և հայ գրականության դասականների ընթերցումներ (մինչև 10 երեխա)՝ պահպանելով համավարակային անվտանգության բոլոր կանոնները: *(գ. Ակունքի մշակույթի տուն)*
Սեպտեմբերի 27	
11:00	«Պահպանի՛ր և սիրի՛ր հայրենի բնաշխարհը». այցելություն հայրենի բնաշխարհի գողտրիկ անկյուններից մեկը՝ Սբ. Պողոս-Պետրոս մատուռ-սրբավայր *(գ. Ակունք)*
12:00	Առցանց հարթակով անդրադարձ հայ գրողներին: Ընթերցանության կազմակերպում, հետաքրքիր պատումների ներկայացում, նրանց ստեղծագործական ուղուն ծանոթացում և քննարկում՝ ապահովելով 7-10 երեխայի մասնակցություն *(գ. Կոտայքի գրադարան)*
	Օրբելի եղբայրների տուն-թանգարան *(ք. Ծաղկաձոր, Օրբելու 11, հեռ.՝+37422360552)*

Սեպտեմբերի 26	
10:30	«Սովորում ենք միասին» կրթական ծրագիր. «Շախմատ խաղի ստեղծման պատմությունը» *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
11:30	«Սովորում ենք միասին» կրթական ծրագիր. «Ծաղկաձորի գանձերը» երեխաները ներկայացնում են քաղաքի հնագիտական գտածոները *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
12:30	«Օրբելի ընտանիքի նամակագրությունը՝ ընթերցանություն երեխաների շուրթերով *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
10:30	Երևանի «Դեկարտ» գեղագիտական կենտրոնի սաները կներկայացնեն իրենց նկարները՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսին և միջնադարյան առակներին *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
11:30	«Բացահայտենք Անին ու Վանը լուսանկարներում» բացառիկ լուսանկարներ Անիի և Վանի պեղումներից՝ Հովսեփ Օրբելու արխիվից *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Հրազդանի երկրագիտական թանգարան **hrazdanmuseum.am** *(ք. Հրազդան, Սպանդարյան 2, հեռ.՝+37422321454)*
Սեպտեմբերի 26-27	
	Տարազագետ-դիզայներ Արտյոմ Սյունեցու տարազների ցուցադրություն, ինչպես նաև տարազների վերաբերյալ համառոտ դասախոսություն *(թանգարանում և առցանց)*
	Կոտայքի մարզային գրադարան *(ք. Հրազդան, Երևանյան 11, հեռ.՝+37422326591)*
Սեպտեմբերի 26	
14:00	Գրականության և կերպարվեստի համադրում. այցելություն հրազդանցի բժիշկ, արձակագիր, գեղանկարիչ Վանիկ Ադամյանի արվեստանոց
Սեպտեմբերի 27	
15:00	Պոեզիայի ժամ. հանդիպում հրազդանցի ստեղծագործողների հետ. ցերեկույթ Հրազդանի Շառլ Ազնավուրի անվան քաղաքային զբոսայգում
	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
	Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան

	(ք. Գյումրի, Հաղթանակի 47, հեռ. +37493494500)
Սեպտեմբերի 26-27	
11:00-18:00	• Թարգմանություններ «Շարունակական կրթությունը թանգարաններում» եվրոպական ձեռնարկից: Առցանց կներկայացվեն թանգարաններում տարբեր տարիքային խմբերի կրթության և ուսումնառության ձևերն ու եվրոպական փորձը: • Տեսանյութի հղման տրամադրում ծերանոցներին (https://youtu.be/zpXPG7YsYvc): Այս ձևաչափով մեծահասակները կկարողանան առցանց այցելել թանգարան և կներգրավվեն շարունակական կրթության դասընթացին: • Հիմնական ցուցադրություն: Օգտատերերը կարող են առցանց այցելել թանգարան և ծանոթանալ Ալեքսանդրապոլի պատմությանը:
	Գյումրու Ավետիք Իսկահակյանի հուշատուն-թանգարան *(ք. Գյումրի, Վարպետաց 91, հեռ. +37431257291)*
Սեպտեմբերի 26	
12:00-15:00	• «Երգեր ու վերքեր» գրական ստեղծագործական ցուցասրահի 2 ցուցափեղկերում կներկայացվեն Վարպետի Եվրոպայում (հիմնականում Գերմանիա, Վիեննա, Ժնև) ապրած տարիներին ձեռք բերած գրքերը, լուսանկարները: Կընթերցվեն այդ տարիներին գրված բանաստեղծություններ: Կհնչեն երգեր. «Բինգյոլ»-1893 թ., Վիեննա, «Դարդըս լացեք, սարի սմբուլ»-1893 թ., Վիեննա, «Էս ճամփեն ոլոր-մոլոր», «Մայրիկիս», -1893 թ., Դրեզդեն, «Մաճկալ ես, բեզարած ես …», 24 սեպտեմբեր, Օբեր-Հոլց, «Կենսական ծովի հույզերի միջին», 1894 թ., Լայպցիգ, «Ռավեննայում», Վենետիկ: • «Իսահակյանի հասարակական-քաղաքական գործունեությունը Գերմանիայում (Ավ. Իսահակյան և Ս. Թեյլերյան)», - ֆիլմի ցուցադրություն: *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Գյումրու Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ *(ք. Գյումրի, Աբովյան 232, հեռ. +37431248205)*
Սեպտեմբերի 26	
15:00	«Մեկ նկարի պատմություն» շնորհանդես *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Գյումրու Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան *(ք. Գյումրի, Վարպետաց 101, հեռ. +37431255142)*

Սեպտեմբերի 26	
13:00	Հեռավար էքսկուրս տարեցների համար. հնարավորության դեպքում՝ տարեցները հրավիրվեն թանգարան
	Գյումրու Մեր Մկրտչյան հուշատուն-թանգարան *(ք. Գյումրի, Ռուսթավելի 30, հեռ. +37431255174)*
Սեպտեմբերի 26	
10:00-17:00	Մեր մանկության տանգոն» - «Եվրոպական բարձր արվեստ». տանգո Ռիո Ռիտա ժամանակավոր առցանց ցուցադրություն: Տանգոյի վերաբերյալ տեսանյութերի ցուցադրում *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
10:00-17:00	Մեր Մկրտչյանը՝ հայկական Չապլին՝ տեսանյութերի ցուցադրում *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Շիրակի մարզային գրադարան *(ք. Գյումրի, Վարդան Ամեմյան 25, հեռ. ՝+37431255136)*
Սեպտեմբերի 26	
13:00	Իտալական գրականություն և արվեստի նմուշների ցուցադրությունъ Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոսության հետ համատեղ *(գրադարանի բակային տարածք)*
	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
	Ն. Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան *(ք. Սիսիան, Ն. Ադոնցի 6/ա, հեռ. ՝+37428323331)*
Սեպտեմբերի 26	
17:00	«Հմուտ ժանեկագործը». հանդիպում Սիսիանում ճանաչված ժանեկագործ Նորվարդ Բաղդասարյանի հետ՝ առցանց լուսաբանում
	Սյունիքի մարզային գրադարան *(ք. Կապան, Շահումյան փող., 12 շենք, հեռ. ՝+37428527906)*
Սեպտեմբերի 26	
11:00	Եվրոպական ճարտարապետության հրաշքը՝ Փարիզի Աստվածամոր տաճարը գրականության մեջ և կինոյում
12:00	«Հանրաճանաչ հեքիաթագիրները» տեսաձայնագրություն
15:00	«Առակս ի՞նչ կցուցանե» գրական ցերեկույթ
	Կապանի երկրագիտական թանգարան *(ք. Կապան, Մ. Հարությունյան 3, հեռ. ՝+37498258018)*
Սեպտեմբերի 26	
15:00	Սյունիքի կրթօջախների պատմության էջեր. (լուսանկարների, վավերագրերի, պատմական աղբյուրների, հուշագրությունների

	ցուցադրություն, առցանց լուսաբանում և ներկայացում) *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 27	
15:00	Այցելություն Կապան համայնքի Շրվենանց գյուղ («118-ամյա Շրվենանցի դպրոցի պատմության և թողած ժառանգության հետքերով» թեմայով բացօթյա միջոցառում-հանդիպում շրվենանցիների հետ)
18:00	«Սյունեցիները հայկական դպրոցների փակմանն ուղղված ցարական ծրագրերի դեմ պայքարում» թեմայով առցանց հարթակում հանդիպում-զրույց *(թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	Ակսել Բակունցի տուն-թանգարան *(ք. Գորիս, Մաշտոցի 41, հեռ.՝+28422966)*
Սեպտեմբերի 26	
14:00	Ակսել Բակունցը՝ ուսուցիչ. առցանց ծրագիր *(տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջ)*
	ՎԱՅՈՑ ՁՈՐ
	Եղեգնաձորի երկրագիտական թանգարան *(ք. Եղեգնաձոր, Շահումյան 4, հեռ.՝+37428123392)*
Սեպտեմբերի 26	
14:00	«Կյանքը նեոլիթում» ֆիլմի առցանց ցուցադրություն, որը պատմում է թանգարանի բակում կառուցված նեոլիթյան երկու կացարանների մասին՝ փորձելով ցույց տալ նեոլիթյան ժամանակաշրջանի կենցաղը
Սեպտեմբերի 27	
14:00-18:00	«Կյանքը նեոլիթում». թանգարանի կայքում կտեղադրվեն թանգարանում պահպանվող նեոլիթյան ժամանակաշրջանի մասին պատմող ցուցանմուշների լուսանկարներ և նյութեր, ինչպես նաև թանգարանի բակում կառուցված նեոլիթյան կացարանների լուսանկարներ
	Ջերմուկ համայնք
Սեպտեմբերի 26	
14:00	«Հայաստան՝ իմ երկիր». «Ազնավուրի» անվան արվեստի դպրոցի բեմահարթակում կհնչեն հայրենասիրական երգեր, իսկ հրապարակում կցուցադրվեն կիրառական արվեստի փառատոնների մասնակից երեխաների գործերը
Սեպտեմբերի 27	
15:00	Ֆրանսիական մշակույթի փառատոն «Ազնավուրի» անվան արվեստի դպրոցի դահլիճում
	Վայոց ձորի մարզային գրադարան *(ք. Եղեգնաձոր, Մոմիկի 1, հեռ.՝+37428124838)*

Սեպտեմբերի 25	
11:00	• «Հինը նորովի՝ ժամանակին համընթաց» դասագրքային ցուցահանդես • «Ժառանգություն և կրթություն. ցկյանս ուսումնառություն» ցուցահանդես *(գրադարանի ֆեյսբուքյան էջ)*
Սեպտեմբերի 26	
11:00	«Շոշափելին և ուսանելին ժառանգության մեջ» առցանց մատենագիտական տեսություն *գրադարանի ֆեյսբուքյան էջ)*
	ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
	Իջևան քաղաք
Սեպտեմբերի 26	
14:00	Տոնական համերգ միջազգային մրցույթ-փառատոներում մրցանակային տեղեր զբաղեցրած սաների կատարմամբ *(Իջևանի երաժշտական դպրոցի դահլիճ)*
Սեպտեմբերի 1-20	
14:00-16:00	Արվեստի դպրոցի սաների աշխատանքների ցուցահանդես *(Իջևանի արվեստի դպրոց)*
	Բերդ համայնք
Սեպտեմբերի 27	
12:00	Սեմինար՝ ավանդական ծիսակատարությունների վերաբերյալ (Աիդա Հարությունյանը երիտասարդներին կներկայացնի Բերդի տարածաշրջանային ավանդական մշակութային արժեքները՝ իմաստուն խոսքեր, ծիսական արարողություններ, առած-ասացվածքներ,խոհանոց և այլն) *(Բերդի մշակույթի տան բակ)*
	Նոյեմբերյան համայնք
Սեպտեմբերի 27	
17:00	Գորգագործության երանգները. հայկական կոլորիտային գորգագործության, ինչպես նաև այլ մշակույթներ նկարագրող գորգերի պատրաստման ընթացքը՝ նոր հոլովակի տեսքով *(Գեղարվեստի դպրոցի հարակից այգի)*
	Տավուշի մարզային գրադարան *(ք. Իջևան, Սրովյան 14, հեռ.՝+37426341537)*
Սեպտեմբերի 26	
15:00	Հայկական ազգային ավանդական ուտեստների ներկայացում տեսանյութի միջոցով *(գրադարանի ֆեյսբուքյան էջ)*

	Դիլիջան համայնք
Սեպտեմբերի 26-27	
12:00-15:00	Վարպետության դասընթացներ (պարարվեստ, կավագործություն, հայկական ժանյակագործություն, կարպետագործություն, գոբելենագործություն, տիկնիկագործություն) համապատասխան մասնագիտական կազմը կանցկացնի վարպետության դասեր՝ ծանոթացնելով նյութերի առանձնահատկություններին *(Դիլիջանի Հովհ. Շարամբեյանի անվ. մանկ. գեղարվեստի դպրոց և գեղարվեստի դպրոցի Հաղարծնի մասնաշենք)*
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
	Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան *(ք. Ստեփանակերտ, Սասունցի Դավիթ 4, հեռ.՝+37447943669)*
Սեպտեմբերի 26	
12:00	«Բացահայտենք երկիրն ավանդական ծեսերով» խորագրով դաս-դասախոսություն
	Ասկերանի պատմաերկրագիտական թանգարան *(ք. Ասկերան, Ն. Ստեփանյանի 14, հեռ.՝+37497267713)*
Սեպտեմբերի 27	
15:00	«Հայրենաճանաչությունը որպես հայրենասիրության գրավական» թեմայով դաս-դասախոսություն
	Կոլխոզաշենի Ա. Պարսեղովի անվան տուն-թանգարան *(Մարտունու շրջան, գյուղ Կոլխոզաշեն, հեռ.՝+37497332321)*
Սեպտեմբերի 27	
12:00	«Կոլխոզաշենցիները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում» խորագրով ցուցահանդես և դաս-դասախոսություն
	Կերպարվեստի պետական թանգարան *(ք. Շուշի, Ղազանչեցոց 24, հեռ.՝+37447731429)*
Սեպտեմբերի 26	
11:00	«Հնի և նորի զուգակցումը ժամանակակից արվեստագետների ստեղծագործություններում» խորագրով ցուցահանդես և դաս-դասախոսություն
	Պրոֆեսոր Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարան *(ք. Շուշի, Մ. Մաշտոց 32, հեռ.՝+37447733572)*
Սեպտեմբերի 26	
14:00	«Արցախի օգտակար հանածոները. բրածո մնացորդները» թեմայով ցուցադրություն և դաս-դասախոսություն

	Հադրութի Ա. Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարան *(ք. Հադրութ, Ա. Մկրտչյան 78, հեռ. ՝+37447551258)*
Սեպտեմբերի 27	
15:00	«Հացի թխումը որպես ազգային ծիսակարգի բաղադրիչ» խորագրով ցուցադրություն և դաս-դասախոսություն
	Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարան *(ք. Մարտակերտ, Ազատամարտիկների 83, հեռ. ՝+37447421582)*
Սեպտեմբերի 27	
11:00	«Արցախյան խոհանոց» խորագրով ցուցահանդես և դաս-դասախոսություն
	Բերդաշենի պատմության թանգարան *(Մարտունու շրջան, գ. Բերդաշեն, հեռ. ՝+37497190297)*
Սեպտեմբերի 26	
11:00	Պոեզիայի բազմալեզու ընթերցումներ
	Քաշաթաղի շրջանի երկրագիտական թանգարան *(ք. Բերձոր, 3-րդ թաղամաս 43, հեռ. ՝+37447752259)*
Սեպտեմբերի 26	
12:00	Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» տիկնիկային ներկայացում
Սեպտեմբերի 27	
12:00	«Պոեզիա և սնունդ մեծերի համար» թեմայով միջոցառում
	Շուշի քաղաքի պատմության թանգարան *(ք. Շուշի, Մ. Մաշտոցի 32, հեռ. ՝+37447731948)*
Սեպտեմբերի 27	
14:00	Արցախի ավանդական կերակրատեսակի՝ խաշիլի պատրաստում
	Մարտունու պատմաերկրագիտական թանգարան *(ք. Մարտունի, Գ.Նժդեհ 3, հեռ. ՝+37447821814)*
Սեպտեմբերի 26	
10:00	«Տեղական բույսերի բուժիչ հատկությունները» խորագրով ցուցահանդես և դաս-դասախոսություն
	Ստեփանակերտի պատկերասրահ *(ք. Ստեփանակերտ, Ս. Դավիթ 6, հեռ. ՝+37447951307)*
Սեպտեմբերի 26-27	
10:00	Մշտական ցուցադրություն
	Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարան *(ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 3, հեռ. ՝+37447943577)*
Սեպտեմբերի 26	
14:00	Լևոն Աղյանի «Իրիկնային աղջամուղջ գրքի քննարկում»

	Հ. Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարան *(ք. Ստեփանակերտ, Ս. Դավիթ 15, հեռ.՝+37447941776)*
Սեպտեմբերի 26	
11:00	Գրքի դերը մանուկների աշխարհում. ընթերցանություն և քննարկում
	Ստեփանակերտի տուն-ինտերնատ *((ք. Ստեփանակերտ, Մանուկյան փող. 2ա շենք, հեռ.՝+37447951167)*
Սեպտեմբերի 27	
	Երաժշտական և ժամանցային միջոցառում
	Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն
Սեպտեմբերի 26-27	
	• Հուշարձանների ոլորտին աջակցող և տուրիստական կազմակերպություններին շնորհակալագրերի հանձնում • Դպրոցականների հետ արշավների կազմակերպում՝ հուշարձանների տարածք
	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժին
Սեպտեմբեր	
	Վերականգնողական կենտրոնի երեխաների համար էքսկուրսիայի կազմակերպում հուշարձանի տարածք
	Բուհեր, քոլեջներ, Հանրակրթական դպրոցներ, նախադպրոցական հաստատություններ, ստեղծագործական կենտրոններ
Սեպտեմբերի 26-27	
	• «Հացի պատրաստման հին բաղադրատոմսեր» խորագրով դաս-միջոցառումների անցկացում • Ավանդական խաղեր • Պոեզիայի բազմալեզու ընթերցումներ • Ձեռքի աշխատանքների ցուցահանդես • «Իմ երազանքի դպրոցը» թեմայով շարադրություն

Ծրագրին միացած մշակութային հաստատությունների և հուշարձանների մուտքն անվճար է սեպտեմբերի 26-ին՝ ժամը 11:00-18:00